

ԹԻՂԱԹՊԱԼԱՍԱՐ Ի-Ի Մ. Թ. Ա. 1112 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԻՐՅԱՆ
ԱՐՇԱԿԱՆՔԻ ԵՐԹՈՒՂԻՆ

ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ի (մ.թ.ա. 1115–1077 թթ.), գահակալության երրորդ տարում¹ Նաիրի կատարած նրա արշավանքի երթուղին պատմագիտության վիճահարույց խնդիրներից է: Հարցը բազմիցս ուսումնասիրվել է, սակայն արտահայտված տեսակետները հակասում են այս արշավանքի մասին պատմող արձանագրության², ինչպես և Թիգլաթպալասար I-ի ու ասորեստանյան այլ սեպագրերի փաստական նյութին:

Թիգլաթպալասարը նշում է, որ անցել է 16 հզոր լեռներ՝ էլամա, Ամագանա, էլիլիշ, Շերաբելի, Թարխունա, Թիրքախուլի, Կիզրա, Թարխանաբե, էլուլա, Խաշթարայե, Շախիշարա, Ուրբերա, Միլիադրունի, Նուլիանզի, Նուբանաշե, Շեշե, և գետանցել եփրատը: Այնուհետև Ասորեստանի արքան հիշատակում է Նաիրիի հետևյալ 23 երկրները. Թումմե, Թունուբե, Թուալի, Կինգարի, Ուզուլա, Ունգամունի, Անգիաբե, Պիլակինի, Աթուրգինի, Կուլիբարդինի, Շինիբիրինի, Խիմուա, Պայթերի, Ուիրամ, Շուրուրիա, Աբանեի, Ադանեի, Կիրինի, Ալբայա, Ուգինա, Նադաբիա, Աբարսիունի, Դայանեի³: Արձանագրության վերջում Թիգլաթպալասարը վկայում է, որ միևնույն արշավանքը շարունակել ու գնացել է խանիգալբատյան Միլիգի (Մալաթիա) քաղաքի բնակչության վրա⁴: Այս արշավանքին վերաբերող այլ արձանագրություններում Թիգլաթպալասար I-ը գրաված տարածքները նշում է հետևյալ կերպ. «...Թումմեից մինչև Դայանեի՝ Խիմուա, Պայթերի և Խաբախի...»⁵, «...Բաբելոնից մինչև Արևմուտքի Մեծ ծովը և Նաիրի երկրի ծովը...»⁶, «...Նաիրիի երկիրը՝ Թումմեից մինչև Դայանեի և Վերին ծով...»⁷, «...Ստորին Ջաբից մինչև Վերին և Արևմուտքի ծովերը...»⁸, «...երկրները՝ Արևմուտքի Մեծ ծովից և Նաիրի ծովի...»⁹: Արշավանքի

1 Թիգլաթպալասար I-ի գահակալության տարեթվի վերաբերյալ գիտական գրականության մեջ արտահայտվել են տարբեր տեսակետներ. մենք ներկայացվող աշխատանքում հիմք ենք ընդունել մ.թ.ա. 1115 թ. և նաիրյան արշավանքի համար՝ մ.թ.ա. 1112 թ. (տես, օր. История древнего мира, 1, М., 1989, с. 207–208):

2 И. М. Дьяков. Ассирио-вавилонские источники по истории Урарту (далее – АВИИУ) 10 (IV, 43); “Вестник древней истории” (далее – ВДИ), 1951, № 2; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (այսուհետև՝ ՀԺՊՔ). Երևան. 1981, էջ 19–20:

3 АВИИУ, 10 (IV, 43).

4 Նույն տեղում, 10 (V, 33), ծան. 62:

5 Նույն տեղում, 11, 12:

6 Նույն տեղում, 12:

7 Նույն տեղում, 13:

8 Նույն տեղում, 15:

9 Նույն տեղում, 16:

ժամանակ, Յոնջալուում (Մանազկերտից 30 կմ արևմուտք) թողած արձանադրուած թյունում նշվում է. «...Թումմիից մինչև Դայանի, ... Խարխի երկիրը մինչև Մեծ ծովը...»¹⁰ գրավելու մասին:

Ուսումնասիրողները, նույնացնելով Թիգլաթպալասար I-ի հիշած Ամադանա¹¹ և Աշշուրնածիրպալ II-ի վկայած Ամադանի¹² լեռները (վերջինները Ղարաջաղաղի կամ էրդանի լեռներն են[համտ. Մադանի հետ])¹³, արշավանքի ելակետ նշում են Հայկական Տավրոսի արևմտյան շրջանը (Անձիտ)¹⁴: Այս առումով Թունուբեն նույնացվում է Սալմանասար III-ի մ.թ.ա. 845 թ. Ուրարտու-Դայանի կատարած արշավանքի ընթացքում անցած Թունիբունի լեռանցքին¹⁵, Թումմեն՝ խեթական աղբյուրներից հայտնի Թումաննային (տեղադրվում է Մալաթիայից հյուսիս-արևմուտք՝ Սվազի, Կայսերիի և Գյուրյունի միջև)¹⁶:

Է. Ֆորրերը, Նաիրիի 23 երկրներից առաջարկելով Պայթերի-Փայտակարան, Աթուրդինի-Դերքսենե, Անդիարե-Անզաֆ, Կուլիբարզինի-Կոլարգենե, Ադանի-Օտենե, Աբարսիունի-Օբորդենի, Թումմե-Թոմ համադրումները, եզրակացնում է, որ ասորեստանյան բանակը գրավել է Սև ծովից մինչև Կասպից ծովն ընկած ամբողջ տարածությունը¹⁷: Արշավանքի երթուղու ճիշտ որոշման համար անհրաժեշտ է հիմք ընդունել որոշակիորեն տեղադրվող երկրներն ու լեռները: Այդպիսիք են Խարխին, Թումմեն և Դայանին (լեռների վերաբերյալ՝ ստորև):

Խարխին ընդհանրական այն երկիրն է, որն ընկած էր Նպատական լեռների և Կորդվաց լեռների միջև, Մ. Ջարի, Արևելյան Խարբուրի, Խեզիլի ու Ջերմի վերին հոսանքների ավազանում՝ հյուսիս-արևելքում սահման ունենալով Աղբակի լեռները: Նրա կազմում էին Խիմմե (Նպատական լեռների շրջանում, Այրտրուանքի և նրան հարող տարածքներում)¹⁸, Լուխա-Լուխի

10 Նույն տեղում, 17:

11 Նույն տեղում, 10 (IV, 43):

12 Նույն տեղում, 23 (III, 92), ծան. 64, 10, ծան. 46: Г. А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту (далее – Н-У). Тбилиси, 1954, с. 170; Н. В. А р у т ю н я н. Биайнили (Урарту). Ереван, 1970, с. 40, 94; ն ու յ ն ի՝ Топонимика Урарту (далее – ТУ). Ереван, 1985, с. 24–25:

13 АВИИУ, 23 (примеч. 64); ТУ, с. 24–25.

14 Ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 60, 88–89: ТУ, с. 190–191.

15 АВИИУ, 31; Գ. ռ. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Ուրարտուի պատմությունը. Երևան, 1940, էջ 125, Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 60, Н-У, л. 170; Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, с. 45–46; Н. В. А р у т ю н я н. նշվ. աշխ., էջ 41; ТУ, с. 190–191.

16 ТУ, с. 188–189. Թունիբունին, սովորաբար, նույնացվում է Անձիտի կիրճերին Բիրկալե ընկած դետնուղուն կամ Գյոկ-դերբին, որոնք տանում են Արածանիի ավազան. Բիրկալեում պահպանվել է Թիգլաթպալասար I-ի մի արձանադրությունը (АВИИУ, 16):

17 Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 62 (ծան. 1), 348:

18 Հ. Մանանդյանի Խիմմեն նույնացնում է ժամանակակից Թիումին (Ջուլամերկից 30 կմ հրվ.-արմ.) (Я. А. М а н а н д я н. О некоторых спорных проблемах истории и географии древней Армении. Ереван, 1956, с. 8, 11–12): Առավել ճիշտ ենք համարում Այրտրուանքում նրա դետնուղուն տեսակետը (Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ). հ. I, Երևան, 1971, էջ 280 (ծան. 2): Այս ամենի մասին տե՛ս ստորև:

(Խրմմեից Հյուսիս-արևմուտք, Լևին-սուրի և Արևելյան Խաբուրի միջև)¹⁹, Արիրգի (Ալկի՛ Լուխիից արևմուտք)²⁰, էլամունի (Ալաման՝ Ջերմի, Արևելյան Խաբուրի, Լևին-սուրի ակունքների շրջանում)²¹, Սուգի (Ջուլամերկը Ջերմի ավազանին կապող լեռնանցքի շրջանում [Հմմտ. Սիկանիսին կամ Սուկանիին])²², Թումնի և այլ երկրներ²³: Այս վերջինը նույն Թումմեն պետք է լինի, երկիր, որ ասորեստանյան աղբյուրներում բազմիցս հիշատակվում է միևնույն իսկ վայրում՝ Կիրրուրիի հարևանությամբ, Մ. Ջաբի ավազանում²⁴:

Մենք այն նույնացնում ենք ներկայիս Թխում բնակավայրի հետ, որը գտնվում է Ջուլամերկից 30 կմ հարավ-արևմուտք, Մ. Ջաբի և նրա աջակողմյա Լևին-սուր վտակի անկյունային հատվածում: Աշշուրնածիրպալ II-ը (մ.թ.ա. 884/3-859 թթ.) իր մի արշավանքի ընթացքում անցել է Թումմեի Սուրբա, Աբուկու, Արուրա, Արուբե բնակավայրերով և մտել Կիրրուրի (Կրերք), այնուհետև՝ Ներքին Խաբուրի²⁵ (Կրերքից՝ Ավրախ, Կորդվաց լեռներից՝ Ջերմ [Շատախի հատված]): Սուրբան, Թերես, Հայոց Սրինգն է (Հմմտ. Հայ. «սուրել» բառին)՝ Մ. Ջաբի ձախափնյակում, Արուբեն, Հավանաբար, ներկայիս Ավարն է՝ Նեխիլի ավազանում (պատմ. Փ. Աղբակի տարածք): Կրերք-Կիրրուրին համանուն լեռնանցքի շրջակայքում էր՝ Լևին-սուրի ավազանում²⁶: Այսպիսով, ստացվում է, որ Թումմե երկիրը ձգվում էր Թխումից, Մ. Ջաբով, Նեխիլի ավազան. տյն խաբուրիական երկիր էր:

Դայանին վաղուց ի վեր նույնացվել է Հայոց Տայք աշխարհին²⁷: Ակնհայտ է, որ Թիզլաթպալասար I-ը Մ. Ջաբի ավազանից հասել է Տայք: Ի դեպ, Յոնջալուի արձանագրությունում դա առավել հստակ է վկայված

19 Լուխա (Լուխի) – Խալդիուխա (Ամիդից հրվ.-արլ.) համադրումն անընդունելի է (ԿՄ, ս. 130): Սալմանասար I-ի (ԱՅԻԿՄ, 2) և Թիզլաթպալասար I-ի (ԱՅԻԿՄ, 10[IV, 7]) հիշատակությունների համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ Լուխա-Լուխին Մ. Ջաբի ավազանում էր (Հմմտ., նաև, խաբուրիական Լուա բնակավայրի հետ [ԱՅԻԿՄ, 14]):

20 Я. А. М а н а н д я н. Նշվ. աշխ., էջ 12:

21 Նույն տեղում, էջ 12, (Հմմտ., նաև, քարտեզ «Վանի վիլայեթ», Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ). հ. 11, Երևան, 1985, էջ 275:

22 Я. А. М а н а н д я н. Նշվ. աշխ., էջ 10, ծան. 2:

23 ԿՄ, ս. 217–218.

24 Թումմեի տեղադրությունը գիտական շրջանակներում վիճահարույց խնդիր է. Ն. Վ. Հարությունյանը, օրինակ, այն կարծիքին է, որ գոյություն են ունեցել Թումմե անունով 2 տարրեր երկրներ (ԿՄ, ս. 188–189): Ն. Ադոնցը այս երկիրը տեղադրում է Յոնջալուի դաշտում (Ն. Ադոնց. Նշվ. աշխ., էջ 61): Գ. Ա. Մելիքիշվիլին, Թումմեն տեղադրելով Ուրմիա լճից հարավ, չի բացառում նաև Վանա լճից Հյուսիս նույնանուն մեկ այլ երկրի գոյության հանգամանքը (ԻԻ-Յ, ս. 173): Մենք համակարծիք ենք Ի. Դյակոնովի հետ. չի կարելի այս արշավանքի ընթացքում հիշատակվող Թումմեն տարբերակել ասուր. այլ արձանագրություններից հայտնի նույնանուն երկրից. այն Մ. Ջաբի ավազանում էր, Կիրրուրիի հարևանությամբ (ԱՅԻԿՄ, 10[примеч. 51], 17[примеч. 2], 23, примеч. 3): Այս մասին տես ստորև:

25 ԱՅԻԿՄ, 23 (I, 43; I, 54; I, 56; I, 58):

26 ԿՄ, ս. 111–112.

27 Г. А. М е л и к и ш в и л и. Диареги. – ВДИ, 1950, 4, с. 26–42; ԱՅԻԿՄ, 10, (примеч. 45), 27(примеч. 13): Б. Б. П и о т р о в с к и й. Նշվ. աշխ., էջ 31; Н. В. А р у т ю н я н. Նշվ. աշխ., էջ 13, 400; ԿՄ, ս. 70–71.

Թուլմաճից Դայանի, Խարխից՝ Մեծ ծով, որը Սև ծովն է՝: Նշվում է նույն տարածքը, երկրորդ դեպքում առավել ընդհանրական ձևով՝ Թուլմաճն Խարխիում էր, Դայանին՝ Սև ծովի հարավամերձ տարածքում:

Որ Թուլմաճն այստեղ էր՝ Մ. Ջաբի ավագանում, հաստատվում է էլամա և Ամադանա լեռների տեղորոշմամբ: էլամա լեռները պետք է հասկանալ իրանական էլամի լեռներ, իսկ էլամը Պարսից ծոցի հյուսիսում էր, այժմյան Խուստանի տարածքում: Պետք է նկատել, որ մ.թ.ա. XII դ. սկզբից, նվաճումների արդյունքում, էլամ պետության սահմանները ընդարձակվել էին մինչև Դիլալայի ավագանը, Ջագրոսի լեռներից արևելք՝ այսօրվա Իրանի տարածքները: Բաբելոնը ևս հայտնվել էր էլամի իշխանության ներքո: Սակայն Նաբուգոդոնոսոր I (1146 -1123) արքային հաջողվում է պարտության մատնել էլամին, իսկ վերջիններիս նկատմամբ հաղթություն է տանում Թիդլաթպալասար I-ը²⁹: Հասկանալի է, որ էլամա լեռները կարող էին լինել Ջագրոսի որևէ հատվածը, որ գտնվում էին էլամի տարածքում. այսօրվա Իրանի մարզերից մեկը, որ գտնվում է իրաքյան սահմանում, կրում է Իլամ անունը³⁰: Թիդլաթպալասարը, հավանաբար, Ջագրոսի այս հատվածն է, որ նշում է որպես էլամա լեռներ: Իլամից հյուսիս-արևելք Համագանն է³¹ (էկբատան): Ամադանա լեռները Ջագրոսի համագանյան հատվածն են: Ստացվում է, որ Թիդլաթպալասարը Իլամ-էլամա լեռներից, Համագանով, շարժվել է հյուսիս՝ մինչև Մ. Ջաբի վերին ավագան՝ խաբխիական Թուլմաճ: Ահա Ջագրոսի այս հատվածում պետք է փնտրել արձանագրությունում նշված 14 մնացյալ լեռները, որոնք, ի դեպ, հիշատակված են Նաիրիի տարածքից դուրս³²:

Ինչ վերաբերում է Եփրատի դետանցմանը³³, ապա Թիդլաթպալասարը կարծեք շտապում է՝ այն նշելով լեռներից հետո. լավագույն դեպքում արքան կարող էր անցնել Արածանին՝ ակունքների շրջանում (այս մասին ստորև):

Թուլմաճից Արածանի հասնելու համար Թիդլաթպալասարը պետք է շարժվեր Կոտուր-Ջագրոսյան լեռներով՝ հյուսիս, ինչպես և վարվել է: Թուլմաճից հետո հիշատակվող Թունուբեն Պարսկահայքի Տամբեր(Տանբեր) գավառն է, Թուլային՝ Այլին է, որ Տամբերի հարավում էր: Այս երկու գավառները Թուլմաճի արևելյան հարևաններն էին և գտնվում էին Այլի-էլի (Նազլուչայ) դետի ավազանում³⁴: Կինդարին պետք է որ Տանբեր-Թունուբեից հյուսիս գտնվեր, քանզի Ուզուլան, որ նշվում է հաջորդիվ, նույնական է Ալմաստ-Տարոնո դետի Ձոլա անվան հետ³⁵:

Ուզուլա-Ձոլային հաջորդում է Ունգամունի երկիրը, որը Վասպուրականի Անձախի ձոր (Ընձա) գավառն է՝ Կոտորի վերին ավազանում: Ուն-

28 АВИИУ, 10(примеч. 45).

29 Всемирная история, т. I, М., 1955, с. 302 – 303.

30 ՀՄՀ. հ. 4. Երևան, 1978, էջ 440, քարտեզ՝ «Իրան»:

31 Նույն տեղում:

32 АВИИУ, 10 (IV, 43):

33 Նույն տեղում:

34 ՀՄՀ. հ. 9. Երևան, 1983, էջ 209, քարտեզ՝ «Պարսկահայք նահանգը և Նոր Շիրական բազմաթյունը»:

35 Ուրմիա է թափվում լճի հյուսիսարևմտյան հատվածում:

զամունի-Անձախի ձոր անունը հուշում է, որ Կոտոր գետը կրել է Ունգա-Անձա անունը (Հմմտ. Հայ. «անձավ, անձուկ»)՝³⁶ քանզի «muna» բիայնական սեպագրում նշանակում է «գետ»³⁷ (Հմմտ. Ալամուն-Էլամունի-Ուլմանիայի Հետ, որը երկիր էր ու լեռ Ջերմի, Արևելյան Խարուրի և Լևին-սուրի ակունքների շրջանում³⁸, իսկ Լևին-սուն ուղղակիորեն կրում էր Էլամունիա անունը)³⁹:



Հաջորդ երկիրը Անգիաբենն է. այն, հավանաբար, համապատասխանում է Վասպուրականի Թոռնավան գավառին⁴⁰, քանզի Հաջորդ երկիրը, որ նշվում է արձանագրությունում, Պիլակինին է, որ նույնացնում ենք Բերկրիի Հետ՝ Վանա լճի Հյուսիս-արևելքում, Բանդիմահի (Բերկրի) գետի ավազանում: Պիլակինի-Բերկրի անունը, հավանաբար, հնգեվրոպական *pilio, *polio արմատից է սերվում, որի ժառանգներից են նաև սանս. palita, pali-knī «սպիտակ ալիք», Հայ. ալի՝ - «կոհակ, ալիք, սպիտակ մազ» և այլն⁴¹: Պիլակինի-Բերկրիից Հետո նշվում է Աթուրգինին, որ Թոռնուրակ լեռան փեշերին էր՝ Համապատասխանելով Վասպուրականի Գառնի գավառին: Երկ-

36 Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արձատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ). Հ. 1, Երևան, 1971, էջ 202, 204:

37 Г. А. М е л и к и ш в и л и. Урартоведческие заметки. — ВДИ, 1951, №3, с. 174 — 176.

38 Я. А. М а н а н д я н. Նշվ. աշխ., էջ 12:

39 Գիտական շրջանակներում ընդունված է այն տեսակետը, որ Էլամունիան Մ. Զարի փերին հոսանքի հնագույն անվանումն է, սակայն առավել հավանական ենք Համարում Մ. Զարի աջակողմյա Լևին-սուր փտակի Հետ նրա նույնականությունը, քանզի այս գետն է, որ սկիզբ է առնում Էլամունի-Ալամունի շրջակայքից:

40 Հնարավոր է, որ Անգիաբեն, ինչպես և Թոռնավանը, նշանակեն «ջրային, անձրևոտ երկիր» (Հմմտ. անգի>անձի>անձրև և թոռն>թոռ՝ «անձրև», արե>ավե>ավան):

41 ՀԱԲ, Հ. 1, էջ 93-94:

րանվան առաջին՝ *աթուր⁴² արմատը նշանակում է «կրակ» (Հնդեվրպ. *atru արմատից. Հմմտ. Հայ. «աթար» բառի հետ): Թոնդրակը, որ գործող հրաբուխ է, ևս կրում է «գետնափոր փուռ, կրակարան» անունը՝ «թոնիր-թոնգիր» բառից⁴³ (այլ անունը՝ իորի «արև»): Երկրորդ՝ *գինի արմատը, հավանաբար, կապված է Գնունիների առհամանվան հետ⁴⁴: Վերջիններիս ժառանգական հայրենիքը ընդգրկում էր Առբերանի գավառը, Աղիովիտ և Արճիշակովիտ գավառների մեծ մասը, որը Հայ մատենագրության մեջ երբեմն հիշատակվում է «Գնունյաց գավառ» կամ «Գնունյաց երկիր» անուններով⁴⁵: Հետաքրքրական է, որ իորենացին նշյալ առհամանունը ստուգաբանում է «գինիունի» ձևով⁴⁶: «Աթուրգինի», հավանաբար, նշանակել է «կրակագինի» և այսպես են նախնիք բնութագրել Թոնգրակի հրաբխային լավան: Աթուրգինի-Գառնիից Թիգլաթպալասար 1-ը Գառնիձորի լեռնանցքով (Թափարիգի) մտել է Կոգովիտ, որը և համապատասխանում է նախորդան Կուլիբարգինի երկրին (Կուլի>Կոգի⁴⁷ և -բարգինի՝ «բարձրավայր» > «հովիտ»):

Թիգլաթպալասարի գրաված հաջորդ երկիրը՝ Շինիբիրինին, Ձիրավն է, համանուն գաղտում. «Շինի»-ն (Սին՝ աբադ. լուսնի աստվածն է) առնչվում է «Արածանի» գետանվանը (հ.՝ *arg, *areg, արմատից՝ «փայլ, ցոլք, լույս», որից են նաև «արծաթ», «արծնել» բառերը)⁴⁸. «բիրինի»-ն Հայերեն «բերան» բառն է (Հմմտ. Առ-բերան, Տուրու-բերան): Արածանի-Շինիբիրինի համագրումը ունի իր նմանօրինակը. Ջերմի ձախակողմյա Արգաստ վտակը (հ.՝ *arg արմատից) կոչվում է նաև Սինեբեր, որն անվանապես նույնական է Շինիբիրինիին⁴⁹:

Թիգլաթպալասարը, հավանաբար, Շինիբիրինի-Ձիրավի դաշտում է, որ կտրել է տվել «ուրուսի» ծառերը և գետանցել Արածանին⁵⁰:

Հաջորդ երկիրը իմնուան է, որ Հ.Կարագոզյանը տեղադրում է Նպատ լեռան շրջակայքում տեղանունը ստուգաբանելով հ.՝ *n. խիմ՝ «ձյուն» և մուա՝ «ուժեղ, առատ» իմաստով: «Նպատը» բխում է հունական «նիֆետոսից» («ձյուն»)՝⁵¹: Նույն անունն էր կրում (իմմե-իմմու) Մ. Ջարի ավազանում մի երկիր, որ գտնվում էր Հարավային Նպատ (Nipates) լեռների շրջանում: Խեթական աղբյուրներից Հայտնի իմմու-իմմուական չի բա-

42 Ատր<պհլ. atu նշանակում է «կրակ» (Հմմտ. Ատուռան՝ «կրակապաշտների կրակարան») (ՀԱԲ. հ. 1, էջ 290-291):

43 ՀԱԲ. հ. 2, Երևան, 1973, էջ 196:

44 Գառնի գավառական և այստեղ գտնվող Գուրի լեռան ու նրա ստորոտի Գիրասուր բնակավայրի, նաև Բայագետ գետի Գերնեիկ անունները ևս, հնարավոր է, որ առնչվեն *գինի(ր)ինի-ին:

45 ՀՍՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 141:

46 Մ ո վ ս ե ս ի ո Ր Ե ն ա ց ի. Հայոց պատմութուն. Երևան, 1990, էջ 71:

47 Հնարավոր է նաև, որ «Կուլը» ունենա հայերեն «Կուլ-Գայլ» իմաստը և Կոգովիտի Գայլատու լիճը պահպանած լինի այդ անունը:

48 ՀԱԲ. հ. 1, էջ 317-318, 319:

49 Հավանական է նաև Շինի>Սինի>Ձի և բիրինի>բիր>բար>րավ անցումները, որտեղից Շինիբիրինի>Ձիրավ: Հետաքրքրական է, որ Ձիրավի և Ալաշկերտի գաղտերը իրարից բաժանող լեռնագագաթը կրում է Սինակ անունը:

50 АВЫУ, 10 (IV, 43):

51 Հ. Կ ար ա գ յ ո գ յ ա ն. Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, I, 1, Երևան 1998, էջ 257-258:

ցառվում, որ համընկնի Մամիկոնյանների Ձյունկերտ ավանին՝ Տարոնի և Պալունիքի սահմանում⁵²: Խիմուռ-Նպատին հաջորդում է նաիրյան Պայթերի երկիրը, որը, հավանաբար, պետք է համագրել Վանա լճի Հյուսիս-արևելյան մասում, Աղի գետի վերին հոսանքում գտնվող Պայ բնակավայրի հետ⁵³:

Հաջորդ երկիրն Ուիրամն է, որը պետք է փնտրել Բերկրի և Զելան գետերի միջև, քանզի Շուրուրիան Շորերն է՝ Ալագաղի գառնավայրի վրա, Զելան գետի ակունքների մոտ⁵⁴: Այս Շուրուրիա-Շորերը, հավանաբար, բիայնական արձանագրությունների Շուրելե երկիրն է: Նկատենք, որ «ուրարտացի Արամուռի Արզաչկու թագավորական քաղաքը»⁵⁵, որ Արճեչն է⁵⁶, Զելանի ստորին ավազանում էր, Վանա լճի ափին: Արձանագրություններում Բիայնայից առաջ հիշատակվող Շուրելեն սկզբնապես, հավանաբար, Վանի թագավորության կենտրոնական երկիրն էր՝ Արձաչկու մայրաքաղաքով:

Ինչևէ, Շուրուրիա-Շորերից հետո Թիզլաթպալասարը մտել է Աբանի, որը գիտական գրականության մեջ նույնացվում է Ապահունիքին⁵⁷: Աչուրի արքան, փաստորեն, Աղի լեռնանցքով անցել է Մանազկերտի գաղտ:

Աբանի երկիրը, որ նշվում է հաջորդիվ, պետք է որ Ապահունիքից Հյուսիս-արևմուտք գտնվեր, համապատասխանելով Տուրուբերանի Դալար, Դանավուրգ, Մարգաղի գավառներից որևէ մեկին կամ բոլորին միասին: Նշյալ տեղորոշումը հաստատվում է Կիրինի երկրի գիրքով, որ Կարինն է⁵⁸:

Թիզլաթպալասարը Կիրինի-Կարինից հետո հիշատակում է Ալբայա, Ուզինա, Նազարիա⁵⁹, Աբարսիունի և Դայանի երկրները:

52 Ձյունկերտի տեղագրության վերաբերյալ տես Ն. Ա. Գ. Ն. Գ. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Երևան, 1989, էջ 28–29:

53 ՀՄՀ, հ. 11, էջ 275, «Վանի վիլայիթ» քարտեզ:

54 Ն. Ա. Գ. Ն. Գ. Հայաստանի պատմություն, էջ 61:

55 АВИИУ, 27 (II, 45):

56 Արզաչկուն նույնացվում է նաև Արձկեի և Մանազկերտի հետ, սակայն առավել հավանական ու ճշմարտացի Արզաչկու-Արճեչ նույնականությունն է թվում (այս ամենի վերաբերյալ տես, օր., Ն. Ա. Գ. Ն. Գ. Հայաստանի պատմություն, էջ 85, Н. В. А р у - т ю н я н. Նշվ. աշխ., էջ 107–108; ТУ, с. 34–35; О. О. К а р а г е з я н. Локализация урартского царского города Арцашкы. – “Вестник общественных наук” АН АрмССР, 1976, №5, с. 67–98.

57 Г. А. Х а л а т ь я н ц. О некоторых географических названиях древней Армении в связи с данными ванских надписей (ՀՀ Ազգային գրադարանի 417 (47.925)/X-17 համարի տակ); Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՀՀՇՏԻ). հ. 1, Երևան, 1986, էջ 1: «Աբանի-Ապահունիք» տեղանունը, հավանաբար, կապված է պահպանված «Չուր» բառի հետ, որից հայերենում ունենք «Ապարհար»՝ «տեղատես, ամսական հոսում ունեցող» իմաստով: Աբանի-Ապահունիքը գտնվում էր Արձանի ավազանում և, հավանական է, երկրանունը ստուգաբանել «Ջրային երկիր» իմաստով:

58 ТУ, с. 111. «Կիրինի-Կարինը», հավանաբար, կապված է Հայաստանի Կարանիս (մ.թ.ա. XIV դ.) թագավորի անվան հետ (Ն. Ա. Գ. Ն. Գ. Հայաստանի պատմություն, էջ 35): Տեսակետը ճշմարտաման է, քանզի Հայաստան ընդգրկում էր Բարձր Հայքի և Փոքր Հայքի տարածքները: Բացի այդ, Հայաստանի արքաներից մեկն էլ կրում էր Աննիյաս անունը, որն համարելի է Դարանաղաց Անի ամրոցի անվանը: Այսինքն, ակնհայտ է, որ Հայաստանի թագավորների անուններով բնակավայրեր են անվանակոչվել: «Կիրինի» անվանումը հայաստանի հայկական միջավայրի ծնունդ է: Դա խոսում է մի կարևոր հանգամանքի մասին ևս. մ.թ.ա. XI դարում Հայաստանի տարածքը ասորեստանցիների կողմից ընկալվում էր. որպես նաիրի երկիր:

59 Ն. Արզնցը Թիզլաթպալասար I-ի հիշած նաիրի Նազարիա, Անդիաբե և Շուրուրիա երկրները նույնացնում է Պետինգերյան աղյուսակի Նասարիա, Անտաբե, Սորուռ կայան-

Աբարսիոնին Այրարատի Բասեան-Բասեն գավառն է: Վերջինս Հայ մատենագրության մեջ երբեմն համարվում է «Հովիտ մեծ», «Քաջ ընդարձակ Հովիտ», «Ընդարձակ դաշտ»⁶⁰: «Բասեն» տեղանվանը, սովորաբար, վերագրվում է տոհմացեղային ծագում⁶¹ և կապվում փասիաններ կամ բասիաններ ցեղախմբի հետ, որը հիշատակում է Քսենոփոնը⁶²: «Աբարսիոնին», որ «Բասեն-Բասեանի» նախնական ձևն է, հավանաբար, կապված է պհլ*aperasan=պրս.*berasan «անսանձ» բառի հետ, որից հայերենում ունենք «ապարասան, ապերասան» «ըմբոստ, հանդուգն, խեռ» բառը⁶³: Ստացվում է, որ «Աբարսիոնի-Բասեան» նշանակում է «ըմբոստ, հանդուգն, քաջարի, անսանձ ժողովրդի երկիր», և պատահական չէ, որ Հայ մատենագրության մեջ Բասենը անվանակոչված է «Քաջ ընդարձակ Հովիտ»: Հասկանալի է, որ Ալբայա, Ուզինա և Նազաբիա երկրները պետք է փնտրել Կարինից Բասեն ընկած հատվածում կամ Կարինի շրջակայքում: Կարինից արևելք, Հասանկալա տանող ճանապարհի աջակողմյան հատվածում կա Ալվար անունով բնակավայր⁶⁴, որը Թիզլաթպալասար I-ի Ալբայան է: Ալվարը գտնվում է Վերին Բասենում, Հասանկալա քաղաքից մոտ 7 կմ հարավ-արևմուտք, Աղբերականց կոչված բարեբեր դաշտում, Միրանաց լեռներից 10 կմ հեռավորության վրա⁶⁵: Հետաքրքրական է նաև «Աղբերականց»⁶⁶ անվանումը, որը, թերևս, համապատասխան է «Ալբայա-Ալվարին»: Ալվարը հիշատակում է Ղ. Փարպեցին՝ V դարի 80-ական թվականների Հայ ազատագրական պատերազմների առնչությամբ⁶⁷: Ալվարից հյուսիս-արևելք, Հասանկալայից հետո, կա Գերան անունով բնակավայր տեղակայված Արաքսի ձախափնյակում⁶⁸: Այս բնակավայրը, հավանաբար, Նաիրյան Ուզինան է: Ինչ վերաբերում է Նազաբիային, ապա անհնարին չէ այն համադրել էրզրումից հարավ-արևելք գտնվող Մասսաբ բնակա-

ներին, որ ընկած էին Մուսից Բագավան հատվածում (Ն. Ա. Ղ. ո. ն. ց. Հայաստանի պատմություն, էջ 60-61): Հ.Մանանդյանը մերժում է սույն նույնացումներն ու տեղագրությունները (Յ. Ա. М а н а н д я н. Նշվ. աշխ., էջ 22-23): Այնուամենայնիվ, հետաքրքիր են համագրությունները. հնարավոր է, որ Խուսեթ, Նասաբիա, Անտաբե, Սորոտ հերթականությամբ հիշատակվող կայանները ցուցանեն Մուսից տարրեր ուղղություններով գնացող ճանապարհները:

60 ՀՀԾՏԲ, հ. 1, էջ 610: ՀՍՀ, հ. 2, էջ 301:

61 ՀՍՀ, հ. 2, էջ 301:

62 Նույն տեղում:

63 ՀԱԲ, հ. 1, էջ 231: Այս ստուգաբանությունն ընդունելու դեպքում հայերեն «ապարասան, ապերասան» բառի պահպանմանից փոխառյալ լինելու տեսակետը պետք է կասկածի ենթարկել և առավել հավանական համարել պահպանմանը և հայերենում այդ բառերի հնդեվրոպական ընդհանրական լեզվից անցած լինելու տարբերակը:

64 ՀՀԾՏԲ, հ. 2, քարտեզ «Էրզրումի գավառ(Էրզրումի նահանգ)»:

65 ՀՀԾՏԲ, հ. 1, էջ 102:

66 Այս գաշտը կրում է նաև Աղբերականք, Աղբերականաք, Արծաթաղբերան, Արծաթաղբերա, Արծաթաղբյուր: Այն առաջին անգամ հիշատակում է Ղ. Փարպեցին, ըստ որի դաշտի հիմնական անունը Արծաթաղբերա էր: Այստեղ էր գտնվում պատմական Դու գյուղը (ՀՀԾՏԲ, հ. 1, էջ 162, Ղ. Փ ա Ր Վ Ե Գ Ի. Հայոց պատմություն. Երևան, 1982, էջ 354, 355):

67 Ղ. Փ ա Ր Վ Ե Գ Ի. Նշվ. աշխ., էջ 374, 375: Ալվարի մասին մի քանի հիշատակություններ կան նաև XIV-XVIII դդ.: Հետագայում Ալվարը մտնում է Էրզրումի նահանգի համանուն գավառի Բասենք գավառակի մեջ:

68 ՀՀԾՏԲ, հ. 2, քարտեզ «Էրզրումի գավառ(Էրզրումի նահանգ)», նաև էջ 850: Այստեղ է գտնվում Գերան գաշտը:

վայրին⁶⁹: Նազարիան կարող է նույնական լինել նաև Ստորին Բասենում գանվոզ Ազար (Ազափ, Ազապ)⁷⁰ կամ Էրզրումի մարզի Խորասանի շրջանի Ազանքոյ (Հասանքոյ) բնակավայրերից որևէ մեկի հետ. վերջինը ևս կրում է Ազապ անունը⁷¹:

Նազաբիայից (Մասսար կամ Ազապ) Թիգլաթպալասարը մտել է Արարսիունի-Բասեն, անցել Դայասենի-Տայք ու, հավանաբար, հասել Սև ծովի ափամերձ շրջանը⁷²:

Տայքից Թիգլաթպալասարը վերագարձել է Յոնջալուի, քանզի այստեղ Հայտնաբերված արձանագրությունը նա կարող էր թողնել միայն Դայասենին գրավելուց հետո: Արքան Յոնջալուից, Արածանիի ավազանով, անցել է Մալաթիա:

Ինչ վերաբերում է Բիրկալեն գետնուղու արձանագրությանը, ապա Թիգլաթպալասարը այն կարող էր թողնել իր այլ արչավանքների ընթացքում: Թունուրե-Թունիբունի նույնականության տեսակետը հավաստի ենք համարում, սակայն գտնում ենք, որ Ալամանասար III-ը, իր կառավարման 15-րդ տարում Տիգրիսի (Ջերմի) ակունքների շրջանից անցել է Տամբեր և այստեղից շարժվել դրեթե նույն երթուղիով, ինչ Թիգլաթպալասար I-ը: Սալմանասարը նշում է, որ հասել է Եփրատի (Արևմտյան Եփրատ) ակունքները, որ Ոսկիանք լեռան լանջերին է. այստեղից նա անցել է Դայասենի:

Պարզվում է մի կարևոր հանգամանք ևս. «ուրարտացի Արամուի» իշխանության տիրույթը ընկած էր Տանբեր-Սուգունիա (Սիկանիս կամ Սուկան)⁷³ գծից մինչև Էրզրում հյուսիսից սահման ունենալով Տայքը:

Այսպիսով, Թիգլաթպալասար I-ի մ.թ.ա. 1112 թ. նաիրյան արչավանքի երթուղին լույս է սփռում մինչքիսյանական շրջանի Հայաստանի երկրների Հասարակական-տնտեսական կացութաձևի, ռազմաքաղաքական հարաբերությունների, էթնովիճակի խնդիրներին: Նաիրյան 23 երկրներն, անվանապես և տարածքային առումով, համընկնում են Մեծ Հայքի Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Այրարատ, Տուրուբերան, Բարձր Հայք և Տայք աշխարհների՝ վերը համադրված գավառներին, զրանց տարածքում գտնվող լեռներին, գետերին, գաղտերին, բնակավայրերին: Հոգևածումներկայացված տեղանունների ստուգաբանությունը փաստում է նաիրյան երկրներում հնգեվրոպացի հայերի բնակության մասին. այս մոտեցումները, թերևս, կարիք ունեն առավել լայնածավալ ուսումնասիրության, սակայն ակնհայտ է, որ էթնոտարածքային հանգամանքը նաիրյան երկրների համախմբման ու կենտրոնացված պետության ստեղծման գործընթացում առանցքային դեր է խաղացել:

69 ՀՀՇՏԲ, հ. 2, քարտեզ՝ «Էրզրումի գավառ(Էրզրումի նահանգ)»:

70 ՀՄՀ, հ. 2, էջ 302, ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 38:

71 ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 38:

72 АВИИУ, 10(примеч. 45).

73 Ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն, էջ 79-80, Я. А. М а н а н д я н. Նշվ. աշխ., էջ 10, ծան. 2:

МАРШРУТ НАИРИЙСКОГО ПОХОДА ТИГЛАТПАЛАСАРА I
в 1112 г. до н.э.

АРТАК САРГСЯН

Р е з ю м е

В статье рассматривается маршрут похода ассирийского царя Тиглатпаласара I на страну Наири, предпринятом в 1112 г. до н.э. Уточняется местоположение ряда стран и других топонимов, упоминаемых в ходе похода. На основании лингвистического анализа многих топонимов, автор приходит к заключению, что преобладающим населением Наири был армяноязычный этнический элемент.

THE ITINERARY OF THE 1112 B. C. NAIRI
CAMPAIGN OF TIGLATHPILESER I

ARTAK SARGSYAN

S u m m a r y

The paper deals with the itinerary of the 1112B.C. Nairi campaign of Tiglathpileser I, king of Assyria. The author offers new localizations for most of toponyms mentioned in the course of the campaign. Taking into account the Armenian etymologies of toponyms, he concludes that the Armenian-speaking ethnic element was dominant in the Nairi area.